Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 9-ի N 1926 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՏՈՒԿ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական, ծառայողական, առևտրային գաղտնիք պարունակող, ինչպես նաև այլ՝ սահմանափակ տարածման տեղեկություն պարունակող վիճակագրական տվյալների և այլ՝ հատուկ վիճակագրական տվյալների վարման հետ կապված հարաբերությունները:

2. Մաքսային մարմիններն իրականացնում են արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց կողմից մաքսային մարմիններին մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ ներկայացված՝ պետական, ծառայողական, առևտրային և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների հավաքում և մշակում:

3. Հատուկ մաքսային վիճակագրության վարման նպատակը նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց գործունեության վերլուծությունն է՝ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների առանձին փուլերում օգտագործման նպատակով:

4. Հատուկ մաքսային վիճակագրության ցուցանիշները կարող են տրամադրվել կոմիտեի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին, որոնց կողմից իրականացվող գործառույթներով պայմանավորված՝ առկա է այդպիսի տվյալների անհրաժեշտությունը:

5. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված տվյալները փոխանակվում են էլեկտրոնային եղանակով, իսկ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունների փոխանակման անհրաժեշտության դեպքում դրանք փոխանակվում են թղթային եղանակով կամ էլեկտրոնային կրիչներով:

6. Հատուկ մաքսային վիճակագրական տվյալների տրամադրումը այլ պետական մարմիններին իրականացվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

7. Ապրանքների բաց թողնման ժամանակահատվածի հաշվառումը ներառվում է մաքսային մարմինների կողմից վարվող հատուկ մաքսային վիճակագրության մեջ և վարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի N 546-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ